

## ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՇԵՂՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՅՈՒՄ

### 8.1 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՇԵՂՈՒՄ

#### 8.1.1 Ներածություն

Պարտավորություններից շեղվելու պետության իրավունքը նախատեսված է հոդված 15-ով, որը սահմանում է՝

1. Պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղումն սույն Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումները անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ:
2. Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու հոդված 2-ից՝ բացառապես պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ, կամ հոդված 3-ի, հոդված 4-ի կետ 1-ի և հոդված 7-ի դրույթներից:
3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, օգտագործելով շեղվելու այդ իրավունքը, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ամբողջությամբ իրազեկում է իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը ծանուցվում է նաև այդ միջոցառումների գործողությունը դադարեցնելու և Կոնվենցիայի դրույթների լիակատար իրագործումը վերսկսելու մասին:

Հոդված 15-ի կետ 2-ը թույլ չի տալիս պարտավորություններից որևէ շեղում՝ կապված հոդված 3-ի (խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելում), հոդված 4-ի կետ 1-ի (ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում), հոդված 7-ի (հետադարձ ուժ ունեցող քրեական պատժի արգելումը), և կապված հոդված 2-ի (կյանքի իրավունք), բացի պատերազմական գործողությունների հետ կապված դեպքերի: Բացի դրանից, չի կարող լինել նաև շեղում թիվ 6 և 13 Արձանագրություններով նախատեսված պարտավորություններից (մահապատժի վերացում)<sup>1</sup>, կամ թիվ 7 Արձանագրության հոդված 4-ից: Այնուամենայնիվ, օրինակ հոդված 6-ով (արդար դատաքննության իրավունք) նախատեսված իրավունքներից տեսականորեն շեղում հնարավոր է, որը կարծիք կա, որ չափազանց դժվար կլինի արդարացնել:

Հոդված 15-ը նախատեսում է եռաստիճան թեսթ իրավաչափ շեղման համար: Նախ՝ պետությունը պարտավոր է ցույց տալ Դատարանին, որ գոյություն ունի պատերազմ կամ արտակարգ իրավիճակ, որը սպառնում է ազգի կյանքին: Եթե այս պայմանը բավարարվում է, այնուհետև, երկրորդ հերթին պետությունը պարտավոր է ապացուցել, որ միջոցները, որոնք նա ձեռնարկել էր «բացառապես պահանջված էին դրության լրջությամբ»: Վերջապես այս միջոցառումները պետք է համապատասխանեն պետության միջազգային իրավունքով ստանձնած պարտավորություններին: Բացի սրանից պետք է պահպանվեն ընթացակարգային պահանջները: Այս պահանջներից յուրաքանչյուրը քննարկված է ստորև:

Դատարանը ընդունում է, որ պետությունն ավելի բարենպաստ պայմաններում է, որպեսզի գնահատի վտանգի աստիճանը և միջոցները, որոնք անհրաժեշտ են վտանգը կանխելու համար: Համապատասխանաբար պատասխանող պետությանը տրված է գործողությունների ազատության լայն շրջանակ՝ կապված հոդված 15-ի հետ<sup>2</sup>, չնայած գործողությունների ազատությունն անսահման չէ: Դատարանը հաշվի է առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ իրավունքների բնույթը, որոնց վրա ազդեցություն է ունեցել

<sup>1</sup> Տե՛ս թիվ 6 Արձանագրության հոդված 3-ը և թիվ 13 Արձանագրության հոդված 2-ը:

<sup>2</sup> *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության (Ireland v UK)*, Շարք Ա, թիվ 25, 2 EHRR 25, կետ 207:

պարտավորություններից շեղումը, հանգամանքները, որոնք պատճառ են հանդիսացել արտակարգ իրավիճակի առաջացման համար և ինչքան երկար է այն տևել:

### 8.1.2 Ընթացակարգային պահանջներ

Որպեսզի պարտավորություններից շեղումը օրինական ուժ ունենա, հարկավոր է, որպեսզի լինի պարտավորություններից շեղման վերաբերյալ պաշտոնական, հրապարակային գործողություն, ինչպես օրինակ ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումն է: Հոդված 15-ը կիրառելի չի լինի, եթե այդպիսի հայտարարություն չարվի, եթե իհարկե չկան հատուկ հանգամանքներ, որոնք խոչընդոտում են դրան: Կառավարության հայտարարությունը,<sup>3</sup> ինչպես նաև նախարարի կողմից խորհրդարանում կատարված հայտարարությունը<sup>4</sup> բավարար կհամարվի:

Պետությունները, որոնք վկայակոչում են պարտավորություններից շեղման դրույթը պարտավոր են նաև (համաձայն հոդված 15 կետ 3-ի) ամբողջությամբ իրազեկել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին իրենց կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին:<sup>5</sup> Այս պահանջների կատարման անհարկի ձգձգումները կարող են մեկնաբանվել ի վնաս պետության:<sup>6</sup>

### 8.1.3 Ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրություն

Խաղաղ պայմաններում պարտավորություններից շեղում կարող է կիրառվել միայն այնպիսի պայմաններում, երբ առկա է ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրություն: Այս դրույթը մեկնաբանվել է որպես «ճգնաժամային կամ արտակարգ բացառիկ իրավիճակ, որը ազդեցություն ունի ամբողջ բնակչության վրա և հանդիսանում է վտանգ տվյալ պետության հասարակության բնականոն կյանքի համար»:<sup>7</sup>

*Լոուլեսսն ընդդեմ Իռլանդիայի* գործում (*Lawless v Ireland*), որը վերաբերվում էր Դիմողին առանց դատարանի որոշման հինգ ամիս ժամկետով ազատությունից զրկելուն, Դատարանը գտավ, որ ողջամիտ էր այն պնդումը, որ 1950-ական թվականներին առկա էր արտակարգ իրավիճակ, կապված և՛ Իռլանդիայում, և՛ նրա սահմաններից դուրս ԻՀԲ-ի (IRA) աճող վտանգի հետ: *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության (Ireland v UK)*<sup>8</sup> 1970-ականների սկզբի համատեքստում, երբ տեղի էին ունեցել ԻՀԲ-ի (IRA) կողմից կազմակերպված բազմաթիվ հարձակումներ, ներառյալ պայթեցումներ և կրակոցներ, անվիճելի էր, որ գոյություն ուներ արտակարգ իրավիճակ: Նույնիսկ այն դեպքերում երբ այս հանգամանքը անվիճելի է, Դատարանը այնուամենայնիվ պետք է տա իր սեփական գնահատականը, սակայն պետությանը կտրվի գործողությունների ազատության լայն շրջանակ: Պետության միայն մի մասում առկա «արտակարգ դրությունը» կարող է ազդեցություն ունենալ ամբողջ բնակչության վրա և հետևաբար կարող է վտանգել «ազգի կյանքը»:

*Ակսոյն ընդդեմ Թուրքիայի (Aksoy v Turkey)*<sup>9</sup> գործով Դատարանը գտավ, որ 1990-ականների կեսերին տարածաշրջանում ՔԱԿ-ի ահաբեկչական գործողությունների մասսայականության և ազդեցության պատճառով առկա էր արտակարգ իրավիճակ Թուրքիայի հարավ արևելքում:

Եվրոպական հանձնաժողովը *Հունական գործում (Greek case)*<sup>10</sup> մերժեց Հունաստանի կառավարության պնդումը, որ առկա է արտակարգ իրավիճակ: Կառավարությունը հենվում էր

<sup>3</sup> *Լոուլեսսն ընդդեմ Իռլանդիայի (Lawless v Ireland)*, Շարք Ա, թիվ 3. 1.7.61, (1979-80) 1 EHR 15:

<sup>4</sup> *Բրաննիգանն ու ՄակԲրայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Brannigan and McBride v UK)* թիվ 14553/89 և 14554/89, Շարք Ա, թիվ 258-B, 26.5.93, (1994) 17 EHR 539:

<sup>5</sup> Դատարանը գտավ, որ սույն հոդվածը խախտվել է *Հունական գործում (Greek case)*, թիվ 3321-3/67 և 3344/67, 5.11.69, Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի տարեգիրք, հատոր 12 (1969) 1:

<sup>6</sup> *Լոուլեսսն ընդդեմ Իռլանդիայի (Lawless v Ireland)*, Շարք Ա, թիվ 3. 1.7.61, (1979-80) 1 EHR 15, կետ 47:

<sup>7</sup> Նույն տեղում՝ կետ 28:

<sup>8</sup> *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության (Ireland v UK)*, Շարք Ա, թիվ 25, (1979-1980) 2 EHR 25

<sup>9</sup> Թիվ 21987/93, 18.12.96, (1997) 23 EHR 553, տե՛ս նաև *Դեմիրն ու այլոք ընդդեմ Թուրքիայի (Demir and others v Turkey)* թիվ 21380/93, 21381/93, 21383/93, 23.9.98 (2001) 33 EHR 43, կետ 45:

<sup>10</sup> Թիվ 3321-3/67 և 3344/67, 5.11.69, Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի տարեգիրք, հատոր 12 (1969) 1:

այն հանգամանքի վրա, որ հասարակական կարգը խախտված է, առկա է սահմանադրական ճգնաժամ և կա կոմունիստների կողմից իշխանությունը զավթելու վտանգ, սակայն Հանձնաժողովը գտավ, որ չկա այս հանգամանքներն ապացուցող որևէ փաստ և հետևաբար գտավ, որ հոդված 15-ը կիրառելի չէ:

#### 8.1.4 Միջոցառումներ, որ բացառապես անհրաժեշտ են հաշվի առնելով դրության լրջությունը

Այն դեպքերում, երբ Դատարանը համոզված է, որ առկա է «ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրություն», պատասխանող պետությունը կարող է ձեռնարկել միայն այնպիսի միջոցառումներ, որոնք «բացառապես անհրաժեշտ են հաշվի առնելով դրության լրջությունը»: Օրինակ՝ ահաբեկչության մեջ մեղադրվողներին առանց դատավարության կալանքի տակ պահելը Իռլանդիայում 1950-ականների վերջերին, ԻՅԲ-ի (IRA) գործողությունների համատեքստում, Դատարանի կողմից *Լուլեստ-ի* գործում համարվեց նշված չափանիշներին համապատասխանող:<sup>11</sup> Նշված գործում Դատարանը հաշվի առավ իրավիճակի վտանգավորությունը, որը հնարավոր չէր կարգավորել քրեական իրավունքով, և առկա երաշխիքները, ներառյալ՝ կալանավորման ընթացակարգի խորհրդարանական վերահսկողությունը և «Կալանավորման հանձնաժողովը», օժտված ազատման հրաման արձակելու պարտավորեցնող լիազորություններով:

Պատասխանող պետությանը տրվում է գործողությունների ազատության լայն շրջանակ՝ գնահատելու իրավիճակը և որոշելու, թե ինչպիսի միջոցառումներ են անհրաժեշտ, այն հիմքով, որ այն ավելի նպաստավոր պայմաններում է գտնվում դա անելու համար քան Եվրոպական դատարանը: Դատարանը հաշվի է առնում մի շարք գործոններ, ներառյալ՝ թե գործող օրենսդրությունը ինչքանով է անհամապատասխան, թե արդյոք միջոցառման շարունակությունը կարող է արդարացված լինել, և կիրառված միջոցների համաչափությունը (կա՞րդյոք այլընտրանք): Արտակարգ իրավիճակներում պետությանը սպառնացող վտանգների պատճառով թույլատրվում է որոշ ժամանակային շեղումներ անհրաժեշտ պաշտպանական միջոցների կիրառման համար և պարտադիր չէ, որ դրանք բոլորը կիրառվեն միանգամից:<sup>12</sup> Այն փաստը, որ կոնկրետ միջոցը համապատասխանում է ներպետական օրենսդրությանը, ինքնին բավարար չէ արդարացնելու Կոնվենցիայից շեղվող միջոցների կիրառումը:<sup>13</sup>

Չնայած *Բրաննիգանն ու ՄքԲրայդն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործում (Brannigan and McBride v UK)<sup>14</sup> ահաբեկչության մեջ մեղադրվողների կալանավորումը մինչև յոթ օր չհամարվեց պետության հայեցողության թուլատրելի շրջանակից դուրս, սակայն *Ակսոյն ընդդեմ Թուրքիայի* գործում (Aksoy v Turkey)<sup>15</sup> 14 օր տևած կալանքը համարվեց չափազանց երկար: Թուրքիայի կառավարությանը չհաջողվեց բացատրել թե ինչու է ահաբեկչության դեմ պայքարը դատական միջամտությունը դարձնում անհրաժեշտ: Դատարանը գտավ, որ չկային բավարար երաշխիքներ՝ «մասնավորապես՝ որ արգելքը հաղորդակցվել փաստաբանի, բժշկի, հարազատի կամ ընկերոջ հետ և որևէ իրատեսական հնարավորության բացակայությունը, որ նա կարող էր տարվել դատավորի մոտ, որպեսզի ստուգվի ձերբակալման օրինականությունը նշանակում է, որ նա ամբողջովին թողնվել էր այն մարդկանց գթասրտությանը, ովքեր պահում էին նրան»:<sup>16</sup> *Էլչին և այլոք ընդդեմ Թուրքիայի* գործում (Elci and others v Turkey)<sup>17</sup> Դատարանը գտավ, որ Կառավարությանը չի հաջողվել ցույց տալ, թե ինչու կարող էր Դիմող իրավաբանների ձերբակալումը առանց նախնական թույլտվության բացառապես անհրաժեշտ լինել հաշվի առնելով դրության լրջությունը, ինչպես դա է պահանջում հոդված 15-ը:

<sup>11</sup> Շարք Ա, թիվ 3. 1.7.61, (1979-80) 1 EHRR 15:

<sup>12</sup> *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության (Ireland v UK) գործը*, Շարք Ա, թիվ 25, (1979-1980) 2 EHRR 25, կետ 220:

<sup>13</sup> *Դեմիրն ու այլոք ընդդեմ Թուրքիայի (Demir and others v Turkey) գործը* թիվ 21380/93, 21381/93, 21383/93, 23.9.98 (2001) 33 EHRR 43, կետ 52:

<sup>14</sup> Թիվ 14553/89 և 14554/89, Շարք Ա, թիվ 258-B, 26.5.93, (1994) 17 EHRR 539:

<sup>15</sup> Թիվ 21987/93, 18.12.96, (1997) 23 EHRR 553:

<sup>16</sup> *Ակսոյն ընդդեմ Թուրքիայի (Aksoy v Turkey) գործը* թիվ 21987/93, 18.12.96, (1997) 23 EHRR 553, կետ 83:

<sup>17</sup> Թիվ 23145/93 & 25091/94, 13.11.03, կետ 684:

Պարտավորություններից շեղումը կիրառելի կլինի միայն պետության այն տարածքների նկատմամբ, որոնց ուղղակի հղում է կատարված պարտավորություններից շեղման վերաբերյալ ծանուցման մեջ:<sup>18</sup>

### 8.1.5 Միջազգային իրավունքով ստանձնած մյուս պարտավորություններ

Պարտավորություններից ցանկացած շեղում պետք է նաև համապատասխանի պետության միջազգային իրավունքով ստանձնած մյուս պարտավորություններին, ներառյալ՝ պայմանագրային պարտավորությունները (օրինակ զինված հակամարտությանը վերաբերվող ժնևի կոնվենցիաները), կամ միջազգային սովորութային իրավունքին: Նմանատիպ ընդհանուր պարտավորություն է նախատեսված նաև հոդված 53-ով, որը սահմանում է, որ Կոնվենցիան չի կարող մեկնաբանվել որպես մարդու այն իրավունքների սահմանափակում կամ շեղում, որոնք երաշխավորված են պետության օրենսդրությամբ կամ նրա մասնակցությամբ որևէ այլ համաձայնագրով:

## 8.2 ՎԵՐԱՊԱՅՈՒՄ

Կոնվենցիան ստորագրման կամ վավերացման պահին պետություններին թույլ է տալիս կատարել հստակ վերապահումներ կապված որոշակի դրույթների հետ: Հոդված 57-ը (նախկին հոդված 64) սահմանում է հետևյալը՝

1. Ցանկացած պետություն սույն Կոնվենցիան ստորագրելիս կամ վավերագիրն ի պահ հանձնելիս կարող է վերապահում անել Կոնվենցիայի ցանկացած դրույթի վերաբերյալ՝ այն առումով, որ այդ ժամանակ իր տարածքում գործող այս կամ այն օրենքը չի համապատասխանում այդ դրույթին: Սույն հոդվածը ընդհանուր բնույթի վերապահումներ չի թույլատրում:
2. Սույն հոդվածի դրույթներին համապատասխան կատարված ցանկացած վերապահում պետք է բովանդակի համապատասխան օրենքի հակիրճ շարադրանքը:

Վերապահումը կիրառելի է այն օրենքի նկատմամբ, որը վերապահումը կատարելու պահին ուժի մեջ է եղել:<sup>19</sup> Սակայն վերապահումը կարող է տարածվել նաև գործող օրենքը փոփոխելու մասին նոր ընդունված օրենքի վրա, պայմանով միայն, որ այն չի դուրս գալիս վարապահման շրջանակներից: Վերապահումը պետք է մեկնաբանվի այն լեզվով, որով այն կատարվել է:

Վերապահումը պետք է ուղղակիորեն վկայակոչվի պատասխանող պետության կողմից, որպեսզի Դատարանը հնարավորություն ունենա քննարկելու այն որևէ գործի շրջանակներում:<sup>20</sup> Եթե վերապահումը ընդունվում է որևէ զանգատի կապակցությամբ, այդ դեպքում զանգատը հայտարարվում է անընդունելի հոդված 35-ի համապատասխան<sup>21</sup> (տե՛ս գլուխ 5): Համաձայն հոդված 57-ի կետ 1-ի, պետությունը չի կարող կատարել ընդհանուր բնույթի վերապահում, ինչը բնութագրվել է որպես «վերապահում, որը այնպիսի ձևակերպումներ է պարունակում, որոնք դարձնում են այն չափազանց անորոշ և լայն որպեսզի հնարավոր լինի որոշել դրանց ճշգրիտ իմաստը և շրջանակները»:<sup>22</sup> *Բելիլոսն ընդդեմ Շվեյցարիայի* գործում (*Belilos v Switzerland*)<sup>23</sup> Դատարանը գտավ, որ խախտվել է այս պահանջը պատասխանող կառավարության կողմից ներկայացված հոդված 6-ին վերաբերող վերապահման կապակցությամբ: Հոդված 57-ով տարածքային բացառություններ չեն թույլատրվում<sup>24</sup> (չնայած, համաձայն հոդված 56-ի,

<sup>18</sup> *Սակիկն ընդդեմ Թուրքիայի (Sakik v Turkey)* գործը թիվ 23878/94-ից 23883/94, 26.11.97, (1998) 26 EHRR 662:

<sup>19</sup> Տե՛ս օրինակ *Ֆիշերն ընդդեմ Ավստրիայի (Fischer v Austria)* գործը թիվ 16922/90, Շարք Ա, թիվ 312, 26.4.95, (1995) 20 EHRR 349, կետ 41:

<sup>20</sup> Տե՛ս օրինակ *Գոկտանն ընդդեմ Ֆրանսիայի (Goktan v France)*, գործը թիվ 33402/96, 2.7.02, կետ 51:

<sup>21</sup> *Ստեկ-Ռիշը և այլոք ընդդեմ Լիխտենշտեյնի (Steck-Risch and others v Liechtenstein)* գործը թիվ 63151/00, որոշում. 12.2.04:

<sup>22</sup> *Բելիլոսն ընդդեմ Շվեյցարիայի (Belilos v Switzerland)* գործը թիվ 10328/83, Շարք Ա, թիվ 132, 29.4.88, (1988) 10 EHRR 466, կետ 55:

<sup>23</sup> Թիվ 10328/83, Շարք Ա, թիվ 132, 29.4.88, (1988) 10 EHRR 466:

<sup>24</sup> *Մեթյունն ընդդեմ Միացյալ Թագավորության (Matthews v UK)* գործը թիվ 24833/94, 18.2.99, (1999) 28 EHRR 361, կետ 29, *Ասանիձեն ընդդեմ Վրաստանի (Asanidze v Georgia)* թիվ 71503/01, 8.4.04, կետ 140:

թույլատրվում է հայտարարություններ կապված այն տարածքների հետ, որոնք ինքնուրույն արտաքին քաղաքականություն չեն իրականացնում, տե՛ս վերը՝ 1.2.3-ում): *Իլիաշկուն, Լեսկուն, Իվանտոչը և Պետրով-Պոպան ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի*<sup>25</sup> գործում (Ilascu, Lesco, Ivantoc and Petrov-Popa v Moldova and Russia) Դատարանը գտավ, որ Մոլդովայի կառավարության կողմից կատարված «հայտարարությունը»՝ կապված Մերձդնեստրի տարածքը վերահսկելու Մոլդովայի իշխանությունների անկարողության հետ, չի կարող հավասարեցվել վերապահմանը, քանի որ այն որոշակի հղում չի կատարում ոչ Կոնվենցիայի, և ոչ էլ ներպետական օրենսդրության որևէ դրույթ: Կարծիք կա, որ 2002 թվականի ապրիլի 15-ին Ադրբեջանի կողմից կատարված հայտարարությունը, որում նշված է, որ «այն անկարող է երաշխավորել Կոնվենցիայի դրույթների կիրառելիությունը Հայաստանի Հանրապետության կողմից օկուպացված տարածքների նկատմամբ այնքան ժամանակ, քանի դեռ այդ տարածքները չեն ազատվել օկուպացիայից» նույնպես ունի կասկածելի վավերականություն:

Հոդված 57-ի կետ 2-ի նպատակն է ապահովել որպեսզի պետությունների կողմից կատարված վերապահումները դուրս չգան այն դրույթների շրջանակներից, որոնք ուղղակիորեն նախանշվել են պետության կողմից: Պահանջը՝ ներկայացնել օրենքի համապատասխան նորմերի համառոտ շարադրանքը և՛ ապացուցողական նշանակություն ունի և՛ նպաստում է իրավական որոշակիությանը: Վերապահումը կարող է չհամարվել վավերական նույնիսկ այս մեկ հիմքով: *Բելիլոսն ընդդեմ Շվեյցարիայի (Belilos v Switzerland)* գործում, որտեղ կառավարությունը ընդունեց, որ վերապահման հետ միասին օրենքի համապատասխան նորմերի տեքստը չի ներկայացրել, Դատարանը գտավ, որ այս պահանջը խախտվել է:<sup>26</sup> Սյուս կողմից *Չորհերն ընդդեմ Ավստրիայի (Chorherr v Austria)*<sup>27</sup> գործում հոդված 5-ին վերաբերվող վերապահումը Դատարանի կողմից համարվեց բավականին որոշակի, քանի որ այն իր մեջ պարունակում էր սահմանափակ քանակի օրենքներ, որոնք միասին վերցված կազմում էին «ճշգրտորեն սահմանված և իրար հետ կապակցված վարչական իրավունքի նյութական և ընթացակարգային նորմերի ամբողջություն»:<sup>28</sup> *Հելլենն ընդդեմ Ֆինլանդիայի (Helle v Finland)*<sup>29</sup> գործում, որում վերապահման նպատակն էր ազատել որոշ հատուկ դատարաններին բանավոր լսումներ անցկացնելու պարտավորությունից, Դատարանը այն վավերական լինելու համար բավարար չափով կոնկրետ համարեց: Լիխտենշտեյնի վերապահումը կապված դատաքննության իրավունքին և դատավճռի բաց հրապարակմանը նույնպես համարվեց վավերական *Ստեկ-Ռիշը և այլոք ընդդեմ Լիխտենշտեյնի (Steck-Risch and others v Liechtenstein)*<sup>30</sup> գործում: Յեցիուսն ընդդեմ Լիտվայի (*Jėčius v Lithuania*)<sup>31</sup> գործում վերապահումը որը թույլ էր տալիս դատախազին կալանքի թույլտվություն տալ, Դատարանը համարեց վավերական քանի որ այն բավարար պարզությամբ հղում էր կատարում և՛ հոդված 5-ի կետ 3-ին և՛ ներպետական օրենքին:

Պետությունը պարտավոր է վերապահում անել յուրաքանչյուր միջազգային պայմանագրի ցանկացած դրույթի կապակցությամբ, որը այն կնքել է մինչև Կոնվենցիայի վավերացումը, և որը կարող է չհամապատասխանել Կոնվենցիային, ինչպես օրինակ Ավստրիայի Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ վերապահումը՝ կապված 1955 թվականի Պետական համաձայնագրի հետ: *Սլիվենկոն և այլոք ընդդեմ Լատվիայի գործում (Slivenko and others v Latvia)*<sup>32</sup> Լատվիայի կառավարությունը պնդում էր, որ իր կողմից Եվրոպական կոնվենցիայի վավերացումը չի կարող հակասել նախկինում Ռուսաստանի հետ կնքված պայմանագրին կապված ռուսական զինվորականների արտաքսմանը:<sup>33</sup> Սակայն, որևէ վերապահում չէր կատարվել և հետևաբար Դատարանը գտավ, որ հակառակ կառավարության պնդումների, այն ունի իրավագործություն քննելու դիմողների փաստարկները կապված նրանց

<sup>25</sup> Թիվ 48787/99, որոշում 4.7.01:

<sup>26</sup> Թիվ 10328/83, Շարք Ա, թիվ 132, 29.4.88, (1988) 10 EHRR 466:

<sup>27</sup> Տե՛ս նաև *Վեբերն ընդդեմ Շվեյցարիայի (Weber v Switzerland)* գործը թիվ 11034/84, 22.5.90, (1990) 12 EHRR 508 և *Էիզենստեկենն ընդդեմ Ավստրիայի (Eisenstecken v Austria)* գործը թիվ 29477/95, 3.10.00:

<sup>28</sup> Թիվ 13308/87, Շարք Ա, թիվ 266-Բ, 25.8.93, (1994) 17 EHRR 358:

<sup>29</sup> Թիվ 20772/92, 19.12.97, (1998) 26 EHRR 159: Տե՛ս նաև *Լաուկկանենն ու Մաննինենն ընդդեմ Ֆինլանդիայի (Laukkanen and Manninen v Finland)* գործը թիվ 50230/99, 3.2.04:

<sup>30</sup> Թիվ 63151/00, որոշում 12.2.04:

<sup>31</sup> Թիվ 34578/97, 31.7.00, (2002) 35 EHRR 16:

<sup>32</sup> Թիվ 48321/99, որոշում 23.1.02:

<sup>33</sup> Պայմանագիրը կնքվել է 1994 թվականին և Լատվիան վավերացրել է Սարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան 1997 թվականի հունիսի 27-ին:

Լատվիայից Ռուսաստան վտարելու հետ: Սակայն *Կոզլովան և Սմիրնովան ընդդեմ Լատվիայի (Kozlova and Smirnova v Latvia)*<sup>34</sup> գործում Լատվիայի վերապահումը, որը արգելում էր Թիվ 1 Արձանագրության հոդված 1-ի կիրառումը անշարժ գույքի հետ վերադարձման վերաբերյալ ազգային օրենքների նկատմամբ, Դատարանի կողմից համարվեց վավերական, քանի որ առընչվում էր խիստ սահմանափակ թվով օրենքների և բավարար չափով հասանելի էր հանրությանը:

---

<sup>34</sup> Թիվ 57381/00, որոշում 23.10.01: